

Տ. ԱՂԱՆ ԱՐՔԵՂԻՄԿՈՊՈՍ ՊԱԼԻՈԶՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 սեպտեմբերի 2003 թ.)

*«Իջեր յերկնից ի դաշուն Արարարեան
Եւ հրաշակեպոեցեր զԵկեղեցիս Հայաստանեայց
Սուրբ Էջմիածին»:*
(Շարակնոց)

«Յանուն Տօր եւ Որոյոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Այսօր, կանգնած հայ ժողովրդի հավաքքի Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Խորանի առաջ, իմ մտածումը կերթա այն պահուն և օրվան, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչ իր հավաքքի ամրությամբ և գործությամբ, հակառակ փարիներու փանջանքին ու փառապանքին, կարողացավ երկինքն երկիր իջեցնել Միածին Որդին, որպեսզի հիմը դնե, հիմնադրե այս սուրբ եկեղեցին այն հրաշափառությամբ, որ երկինքը երկրին կնայի, այն գեղեցկությամբ, որ Աստված իր սերը ցույց տվեց մարդկության նկատմամբ, այն սիրով ու զոհողությամբ, որ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իր անմեղ հոգին զոհաբերեց մարդկության փրկության համար: Ու այսօր հայ աղոթքը, հայ շարականը կըսեն Քրիստոսին, թե՛ «Իջար երկնքից Արարարյան դաշտին մեջ, որպեսզի հրաշակեպոես Հայաստանայց Եկեղեցին Ս. Էջմիածնի մեջ»:

Արարարյան դաշտն աստվածաշնչական վայր մըն է, ուր Նոյյան Տապանն Արարարի բարձունքի վրա հանգչելե հետո՝ Նոյ Նահապետն իջավ Արարարյան դաշտը և նոր կյանքն է, որ սկսավ, նոր քաղաքակրթությունն է, որ սկսավ: Ու ահա դարեր հետո Միածինն անգամ մը ևս կուգա այս աշխարհը, որպեսզի հիմը դնե այս անգամ նոր փապանի մը, նոր եկեղեցիի մը և ան ալ՝ Հայաստանայց Առաքելական Ս. Եկեղեցիին:

Այդ եկեղեցիի կառուցման ժամանակ հայ թագավորը, հայ նախարարը, հայ իշխանուհին ու ազնվականը շինական հայու հետ իր քրտինքը խառնեց այս փաճարի կառուցման մեջ: Քարերը փոխադրվեցան Արարարի բարձունքն, անոր կողերն հասնելու համար մինչև այս Սրբազան վայրն իր Հին Կրակարանով և Նոր ճշմարտությամբ՝ Հայ Եկեղեցիին համար հավաքքի կենտրոն մը, հավաքքի հիմք մը հաստատվելու համար: Եվ Հայաստանայց Եկեղեցին փարիներ շարունակ, դարեր շարունակ ուր ալ գտնված ըլլա՛ն անոր զավակներն իրենց աչքերն ուղղած են դեպի Սրբազան այս վայրը՝ Սրբություն Սրբոց Սուրբ Էջմիածինը, որպեսզի Լուսավորչի հավաքքն կայծ մը կարողանան առնել և Միածին Որդիին օրհնութենեն կարողանան օրհնվիլ իրենց հավաքքի գործը շարունակելու և իրենց ազգային պարկանելությունն ամրացնելու համար:

Այս եկեղեցին միմիայն շենք չէ. այս եկեղեցին հրաշակերպված է մեր Տիրոջ՝ Տիսու Քրիստոսի կողմն, որ ոսկե ուռամբ երկինքն երկիր իջավ անոր հիմը դնելու համար: Ամբողջ մեր պարմության ընթացքին յուրաքանչյուր հայ՝ ըլլա անիկա մեծ անձնավորություն, թե շինական հայորդի, իր ինքնությունը, իր պարկանելությունը, իր հավաքքն սրացավ այս սուրբ փառարեն:

Ու մենք այսօր, իբրև առաջնորդն Ավստրալիո և Նոր Զելանդիայի, մեր հեք բերած ենք ուխտավորներու խումբ մը, որոնք աշխարհի հեռավորագույն թեմի մը մաս կկազմեն, սակայն գորավոր կերպով կապված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայաստանյայց Եկեղեցիին: Մեզի հեք եկած են նաև Ավստրալիո եկեղեցիներն կաթոլիկ, բողոքական և անգլիկան Եկեղեցվո ներկայացուցիչներ, որոնք մեզի հեք ուխտի եկած են՝ իրենց կապը ձևով մը ամրացնելու Հայ Եկեղեցվո հեք, ձևով մը փոխադարձ այցելություն փայլու այն օրհնության, որ սրացան Ամենայն Հայոց Կաթողիկոսն անցյալ փարվա նոյնմերիին՝ հովվապետական իր այցելության ժամանակ: Այս այցելությունները պարզ և ձևական չեն: Այս այցելությունները մարդու հոգիին թելերն է, որ կգորացնեն՝ կապելով Հայրենիքին ու Հայ Եկեղեցիին: Ու Հայ Եկեղեցին անցնող 17 դարերու ընթացքին կարողացավ այս շենքն ներս ոգի, գիտակցություն և շունչ փայլ, որպեսզի մեր գավակները, աշխարհացրիվ հայորդիները կարողանան նայիլ, փեսնել, ջերմանալ այն հավաքքով, որ մեր հավաքքի նախահայրը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, ունեցավ ու պարզեց հայ ժողովուրդին:

Քրիստոս իջավ Արարաբայան դաշտը: Օրհնվեցավ այդ դաշտը և մեր ժողովուրդը, օրհնըվեցավ մեր Հայրենիքը: Այսօր, երբ անոր անկախության փասաներկուերորդ փարեդարձն է, որ կփոռենք, ուրախություն, գոհունակություն և երջանկություն ունինք այն պարճատով, որ մեր պարմության ընթացքին բազում նեղություններն հեքո, բազում դժվարություններն հեքո առիթ ունեցանք կրկին, ինչպես նաև Եկեղեցին, նաև ժողովուրդն ազար և անկախ կյանք մը ապրելու համար: Ու այս ամենը մենք կպարփինք Երկնավոր Հոր Միածին Որդիին, որ իջավ և օրհնեց այս սրբազան վայրն ու սրբազան երկիրը, հրաշակերպեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Մարդիկ՝ երազի ու փեսիլքի անձնավորություններ, կարողացան այդ ամենը պահել, հարստացնել ու բազմացնել՝ ըլլա անիկա ձեռագիր ձևի մեջ, ըլլա անիկա ճարտարապետության ձևի մեջ, ըլլա անիկա երաժշտության ձևի մեջ: Ու անոր պարագային մեր Սրբազան Հայրապետներն իրենց ճակտի թրփինքը, իրենց կյանքի արևը, աչքին լույսն ընծայեցին եկեղեցին կանգուն պահելու համար՝ հակառակ բազում դժվարություններուն:

Այսօր ավստրալահայ գաղութն իր ուխտավոր գավակներով և ինչու չէ՝ այն բոլոր գավակներով, որ կզգրվին Ավստրալիո մեջ, կուզան խոնարհելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջ, հայտնելու իրենց սերը, իրենց հարգանքը, իրենց ակնածանքը հանդեպ Նորին Սրբության, հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Եկեղեցին կանգուն կմնա և՛ Սրբազան Հայրապետներով, և՛ եկեղեցական դասով ու աշխարհական ժողովուրդով: Եվ մենք այդ հեռավոր ամիսն վրա նայելով Ս. Էջմիածնին՝ կկարողանանք մեր ճամփան, մեր ուղին գրնել ու առաջնորդվիլ միշտ գիտնալով, թե ճամփաները պիտի ուղղվին դեպի Ս. Էջմիածին, որպեսզի ամեն մեկ հայորդի իր հայկական ոգին, իր թրիստոնեական գիտակցությունն սրանա այս Սրբազան վայրեն, որ Իջման Խորան կկոչվի:

Մենք եկած ենք մեր ուխտը կատարելու այս բացառիկ փարվա առիթով, երբ կրոնվի Մայր Տաճարի օմման 1700-ամյա փարեղարձը Ս. Էջմիածնի: Ու կխնդրենք Ամենայն Հայոց Կաթողիկոսեն, որ իր օրհնությունը միշտ բաշխե իր զավակներուն Հայրենիքի, Արցախի, թե՛ Սփյուռքի մեջ և մանավանդ այս պարագային՝ հեռավոր ավերին գրավող ավսարալահայ ժողովրդին:

Թող Տերը կանգուն և զորավոր պահե Հայաստանյայց Եկեղեցին, անոր Սրբազան Քահանայապետը՝ Նորին Սուրբ Օծություն Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը, եկեղեցականաց դասը և ժողովուրդը, որպեսզի հավաքքի խորհրդանիշով կարողանա շարունակել և իր Հայրենիքի ազատությունը և իր Եկեղեցիի ազատությունը ի փառս մեր ժողովրդին, ի փառս մեր Եկեղեցիին. ամեն: